

Զեկույց

Հասարակական կազմակերպությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ

Ընդհանուր նկատառումներ:

Օրենքի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացրած հասարակական կազմակերպությունները չեն նշել հիմքեր, որոնք կվկայեին այն մասին, որ դրանք քննարկվել են տվյալ ՀԿ-ների կառավարման կոլեգիալ մարմիններում, ուստի հիմնականում գործ ունենք դրանց նախագահների միանձնյա դիրքորոշումների հետ: Այս մոտեցումը տվյալ դեպքում առավել խոցելի է, եթե նկատի ունենանք, որ օրինագիծը շոշափում է հենց ՀԿ-ների նախագահների և դրանց անդամների շահերի հակասության խնդիրներ:

Մինչդեռ, մեր կողմից օրինագիծը ոչ միայն դարձել է հանրության լայն քննարկման առարկա, այլև՝ այն մշակվել և քննարկման է ներկայացվել հենց մի շարք հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ և դրանց առաջարկությունների հիման վրա: Մինչ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը այն դեռևս 4 ամիս առաջ տեղադրվել է Արդարադատության նախարարության ինտերնետային կայք-էջում, որն ուղեկցվել է ծավալուն հիմնավորումներով: Այս առումով, շնորհապարտ եմ այն ՀԿ-ներին, որոնք ոչ միայն շահագրգիռ մասնակցություն են ցուցաբերել, այլև՝ հանդես են եկել կոնկրետ հիմնավորված առաջարկություններով:

Երկու օր առաջ թվով 7 ՀԿ-ներից ստացել ենք առաջարկություն՝ նախագծի 6-րդ հոդվածը մասնակի փոփոխության ենթարկելու վերաբերյալ, ինչի հետ համամիտ ենք և դրան կանդիդատանամ ստորև:

Ներկայացված առարկությունները ոչ միայն գուրկ են իրավաչափ հիմնավորումներից, այլև ուղեկցվել են ինչպես օրինագծի, այնպես էլ՝ միջազգային պայմանագրերի ու միջազգային փորձի խեղաթյուրմամբ, ինչը նվազեցրել է օրինագծերի հիմնադրույթները համարժեքորեն ընկալելու և դրանք անաչառ քննարկման նյութ դարձնելու հնարավորությունը: Բացի այդ, դրսևորվել է մեկ այլ պարզունակ մոտեցում. անտեսել միջազգային իրավական ակտերի բոլոր այն հիմնադրույթները, որոնք ակնհայտորեն հակասության մեջ են և հերքում են հեղինակների գնահատականները:

Մտահոգող է նաև այն, որ հեղինակները դրսևորել են օրինագծի դրույթները մերժելու երկակի ստանդարտներ, արդյունքում որոշ դրույթներ փորձել են առարկել իրենց իսկ հակասող այլ փաստարկներով:

Օրինագծում Դուք չեք հանդիպի որևէ դրույթի, որը կսահմանափակեր ՀԿ-ների ֆինանսավորման տարաբնույթ ֆինանսավորման աղբյուրները, և անհասկանալի է, թե ի՞նչ նկատառումներով է որոշ սակավաթիվ ՀԿ-ների նախագահների անհանգստացրել այդ ֆինանսական աղբյուրներից ստացված միջոցների շրջանառության վերաբերյալ հանրությանը և, հատկապես, իրենց կազմակերպության անդամներին նվազագույն տեղեկատվություն տալու իրավաչափ և տրամաբանական ու միջազգային չափանիշներին համապատասխանող դրույթը:

Նկատառումներ՝ ըստ հոդվածների վերաբերյալ առարկությունների:

1. Ըստ առարկությունների հեղինակների, ՀԿ-ի անվանման մեջ միություն բառի օգտագործումը կարող է շփոթություն առաջացնել, քանի որ դա իբր իրավակազմակերպական ձև է: Նախ, օրենսդրությունում իրավակազմակերպական ձև՝

հասկացություն գոյություն չունի: Կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում նկատի է ունեցվել կազմակերպական-իրավական ձև՝ հասկացությունը:

Ինչևէ, անդրադառնանք, այսպես կոչված, շփոթության խնդրին: Ավելի, քան ակնհայտ է, որ նման շփոթության մասին խոսք անգամ չի կարող լինել հետևյալ հիմքերով՝

- Հասարակական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ՀԿ-ի անվանման մեջ պետք է հստակ նշվի հասարակական կազմակերպություն՝ անվանումը, իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՀԿ-ի անդամ բացառապես կարող է լինել ֆիզիկական անձը, հետևաբար ինքնին հասկանալի է, որ ՀԿ-ն չի կարող շփոթության արդյունքում նույնացվել իրավաբանական անձանց միության հետ,

- առ այսօր գործում են բազմաթիվ ՀԿ-ներ, որոնց անվանումներում առկա է 'միություն' անվանումը ('Նկարիչների միություն', 'Ճարտարապետների միություն', 'Ժուռնալիստների միություն', 'Գրողների միություն', 'Իրավաբանների միություն' և այլն): Օրենքի ընդունումից հետո անցել է շուրջ 8 տարի, սակայն առհասարակ չի ծագել այդ ՀԿ-ներին իրավաբանական անձանց միության հետ շփոթելու խնդիր: Նույն տրամաբանությամբ պետք է շփոթություն առաջացնել նաև արհեստակցական միություն՝ արտահայտությունը,

- Իրավաբանական անձանց միությունը կազմակերպական-իրավական ձև չէ, տվյալ դեպքում ձևը վերաբերում է բացառապես իրավաբանական անձին, որի դեպքում նա անվանման մեջ նշվում է կազմակերպական-իրավական ձևը (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մաս),

- շահույթ չհետապնդող ցանկացած այլ կազմակերպությունների, այդ թվում կուսակցությունների համար նման սահմանափակում նախատեսված չէ, ինչի արդյունքում խտրական մոտեցում է դրսևորվում ՀԿ-ների նկատմամբ:

Մասնավորապես հարց է ծագում. ինչո՞ւ է շփոթության հարց բարձրացվում միայն ՀԿ-ների դեպքում, ինչո՞ւ, օրինակ կուսակցության անվանման մեջ նույն բառի օգտագործումը չի կարող շփոթություն առաջացնել:

Ինձ համար այս ուղղորդվող անհանգստությունը հասկանալի կլինի, եթե հասարակական կազմակերպության անվանման մեջ պարտադիր չօգտագործվեին հասարակական կազմակերպություն բառերը:

Վերցնենք վատագույն տարբերակը, անվանումը շփոթություն է առաջացնում, որովհետև տվյալ անձը տեղյակ չէ, որ ՀԿ-ի անդամ կարող են լինել բացառապես ֆիզիկական անձինք: Այդ դեպքում հարց է ծագում. եթե տվյալ անձն այնքան պատրաստված չէ, որ իրազեկ լինի 'միություն' բառի քաղաքացիաիրավական նշանակության մասին, ինչպես կարող է շփոթել այն ՀԿ-ի հետ. վերջին հաշվով մարդուն անհայտ տեղեկությունները չեն կարող համեմատելու նյութ լինել ու արդյունքում շփոթության առիթ դառնալ:

Իհարկե, շփոթության գործոնը, որպես հոգեբանական ինստիտուտ, գոյության իրավունք ունի, բայց հարիք չէ տեղի, անտեղի այն դարձնել փաստարկ: Շփոթության մասին իրավաչափ է խոսել, երբ խոսք է գնում, օրինակ ապրանքանշանի, ֆիրմային անվանման մասին և այլն, սակայն վերը նշված դեպքը ոչինչ ընդհանուր չունի շփոթության ինստիտուտի հետ:

Ի դեպ, հիշյալ ՀԿ-ները բազմիցս դիմել են իրավասու պետական մարմիններին՝ օրենքի հիշյալ անհիմն արգելքը հանելու առաջարկությամբ, սակայն այդ միջնորդությունը նույն անհիմն պատճառաբանություններով անհարկի մերժվել է, իսկ արդյունքում ՀԿ-ները պարզապես պահպանել են իրենց անվանումներում հիշյալ

տերմինը: Սա վատ ապացույց է, որ ոչ իրավաչափ իրավանորմի պահանջը գործնականում պարզապես հնարավոր չէ ապահովել:

2. Օրինագծի 11-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի առնչությամբ առարկությունը, ըստ որի իբր պահանջվում է ՀԿ-ի գործադիր մարմնի փոփոխության մասին իրավասու մարմնին տեղեկացնելու փոխարեն գրանցելու ընթացակարգ, պատկանում է այն առարկությունների շարքին, որոնցում օրինագծի դրույթները ճիշտ չեն ներկայացվել:

Նախ, անտեսվել է այն, որ դեռևս 2007թ. ապրիլի 9-ին ընդունված օրենքով արդեն իսկ վերանայվել է իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցման ընթացակարգը, որը հավասարապես վերաբերվում է ՀԿ-ներին: Ավելին, այդ ընթացակարգը գործնականում արդեն իսկ 2 տարի շարունակ կիրառվում է ՀԿ-ների առնչությամբ և երբևիցե խնդիրներ չի առաջացրել:

Այլ կերպ ասած տվյալ դեպքում ոչ թե նոր կարգ է սահմանվել, այլ՝ համապատասխանեցվել է տվյալ օրենքը Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի դրույթներին: Ասվածից բխում է, որ իբր թե իրավաբանական անձանց համեմատությամբ ավելի կոշտ մոտեցումներ ներդնելու վերաբերյալ եզրահանումները պարզապես հիմնազուրկ են:

Ինչ վերաբերում է հասցեների փոփոխության հիմքով գրանցումներին, ապա այս օրենսդրական դրույթը մեր կողմից գնահատվում է, նաև որպես գործարարությանը խոչընդոտող գործոն, ինչի առնչությամբ մեր կողմից արդեն իսկ մշակվում է օրենքի նախագիծ, որը բացառելու է գրանցումների ինստիտուտը: Բնականաբար, դա կլինի համընդհանուր մոտեցում և հավասարապես կվերաբերի ՀԿ-ներին: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով է, որ առաջարկել ենք հասցեների և ՀԿ-ների գործադիր մարմնի վերաբերյալ դրույթները պարզապես հանել այն օրենքից, որի կարգավորման առարկային չեն վերաբերում հիշյալ դրույթները:

Իսկ այն, որ տվյալ հարցադրման տեսանկյունից ՀԿ-ների և իրավաբանական անձանց միջև պետք է սահմանվի նույնական չափանիշներ, չեն վիճարկում նաև առարկությունների հեղինակները:

Այսինքն՝ մեր առաջարկությունը ոչ թե վատթարացնում է ՀԿ-ների վիճակը, այլ փորձ է արվում վերջիններիս վրա տարածել առավել նախընտրելի իրավական ռեժիմ, որը շատ շուտով դրվելու է շրջանառության մեջ:

Հավելեմ, որ պատրաստ ենք այս հարցում մեկ այլ տարբերակ քննարկելուն. առայժմ ձեռնպահ ենք մնում միասնական դիրքորոշում ամրագրելուց և գնում ենք այդ քայլին, երբ մեկ-երկու ամիս հետո շրջանառության մեջ կդրվի նաև իրավաբանական անձանց գրանցման նոր, պարզեցված ընթացակարգը: Սակայն նկատի ունենաք, որ, միննույն է, ըստ էության, այդ օրինագծերի քննարկման ժամկետները համընկնելու են, եթե նկատի ունենանք, որ Ազգային ժողովի աշնանային նստաշրջանին մնացել է մեկ քառօրյա նիստ:

3. Չարմանայիորեն ՀԿ-ների գործունեության թափանցիկության վերաբերյալ օրինագծի բոլոր դրույթներին դեմ արտահայտված և անհարկի ծախսերի համար մտահոգություն հայտնած հեղինակները, առարկում են հանրագումարները 2 տարին մեկ հրավիրելու փոխարեն 4 տարին մեկ հրավիրելու դրույթի դեմ:

Նախ, այս դրույթի կողմնակիցները դարձյալ ՀԿ-ներն են, ընդ որում, այն ՀԿ-ները, որոնք առանձնանում են իրենց անդամների հիրավի մեծաքանակ կազմով, ինչը,

հայտնի իմաստով, բարդություններ է ստեղծում հաճախակի հանրագումարներ հրավիրելու տեսանկյունից: Բնականաբար, դա որևէ բարդություն չի առաջացնում հապճեպ ստեղծված և սակավաթիվ անդամներ ունեցող ՀԿ-ների համար, սակայն օրենսդրության կարգավորման առարկան չի կարող սահմանափակվել միայն սակավաթիվ անդամներ ունեցող ՀԿ-ներով: Նկատենք, որ գործող օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, ՀԿ կարող են հիմնադրել առնվազն 2 ֆիզիկական անձ, որոնց համար, իհարկե, հանրաժողով հրավիրելը առանձնակի բարդություն չէ և լրացուցիչ ծախսերի չի հանգեցնի:

Հավելենք, որ տվյալ դեպքում հրապարակայնության սկզբունքը բնավ չի խախտվում, կարիք չկա անհանգստանալու, քանի որ օրինագծում հենց առաջարկվում է հանրությանը, այդ թվում՝ բնականաբար ՀԿ-ի անդամներին, տարեկան մեկ անժամ իրազեկել ֆինանսատնտեսական գործունեության մասին, ինչը անհարկի սուր տարաձայնության առիթ է տվել նույն առարկություններին հեղինակներին:

Բացի այդ, անտեսվել է, որ օրենսդրությամբ, մասնավորապես, հիշյալ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված են գործուն հիմքեր՝ արտահերթ հանրագումարներ անցկացնելու համար՝ ՀԿ-ի անդամների 1/3-րդի, կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի կամ վերստուգողի պահանջի դեպքում: Ինքնին հասկանալի է, որ վերը նշված սակավաթիվ ՀԿ-ների համար անդամների 1/3-րդի պահանջ ներկայացնելն ընդհանրապես խնդիր չէ:

Անտեսվել է մեկ այլ փաստարկ նս. 2 տարին մեկ հանրագումար չանցկացնելու օրենքի պահանջը նույն ՀԿ-ի նկատմամբ նաև խիստ սանկցիաներ կիրառելու հիմք է, ինչը, ըստ էության, առաջարկվում է դադարեցնել: Իսկ, որ գործնականում բազմաթիվ են այն դեպքերը, երբ բազմաքանակ անդամներ ունեցող ՀԿ-ներին ֆինանսական պատճառներով միշտ չէ, որ հաջողվում է պարբերաբար հանրագումարներ անցկացնել, վկայում են վիճակագրական տվյալները: Թերևս, հենց այս նկատառումներով են հիշյալ ՀԿ-ները Արդարադատության նախարարությանը ներկայացրել իրենց վերոհիշյալ խնդրանքը:

4. Օրինագծի 5-րդ հոդվածին, կարծում եմ, անդրադառնալու կարիք չկա, քանի որ առարկություններին հեղինակների կարծիքով, առաջարկվող փոփոխությունը չնչին է: Այո նախագծում կան նաև ոչ էական նշանակություն ունեցող, սակայն հիմնավորված ու իրավական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ փոփոխություններ և բնավ պարտադիր չէ, որ առաջարկվող դրույթը լինի խիստ սկզբունքային:

5. Ինչպես արդեն նշվեց, անհարկի մեծ տարաձայնության տեղիք է տվել նշված օրենքի 16-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը, ըստ որի նախատեսվում է, որ ՀԿ-ի բարձրագույն մարմնի կողմից ձևավորված գործադիր մարմինը մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը մամուլի միջոցով հրապարակում է տեղեկատվություն՝ ստացված եկամուտների և դրանց շրջանառության վերաբերյալ: Ընդ որում, խոսքը ոչ թե բոլոր, այլ՝ բացառապես 1 մլն դրամը գերազանցող գործարքների մասին է:

Ժամանակին արդեն իսկ այս առումով եղել ակնհայտ անհիմն ու խեղաթյուրված առարկություններ, որոնք հանգամանորեն հերքել ենք, սակայն, քանի որ, դրանք ևս մասամբ վերանայվել են, անդրադառնանք նաև այդ առարկություններին:

Նախ, բացարձակապես իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե իբր հիշյալ դրույթը բացակայում է Արևմտյան կամ Արևելյան Եվրոպայի որևէ երկրի

օրենսդրությունում ու չի բխում միջազգային իրավական ակտերի պահանջներից: Նշված երկրներում, առանց որևէ վերապահման, նախատեսված է ՀԿ-ների կողմից իրենց ֆինանսավորման աղբյուրների և դրանց շրջանառության մասին իրավասու մարմիններին հաշվետվություն ներկայացնելու (նկատենք, որ նախագծով սուսկ տեղեկատվության մասին է խոսք գնում) մասին:

Բացի այդ, բոլոր ՀԿ-ները պարտավոր են այդ հաշվետվությունները հրապարակել մամուլում (նախագծով սուսկ առաջարկվում է հրապարակված օրինակներից մեկը հանձնել լիազոր մարմնին), ընդ որում, հաճախ նշված է օրաթերի անվանումը:

Մասնավորապես, մամուլում տարեկան հաշվետվությունը հրապարակելու դրույթներ են ամրագրված Ռուսիայի Միավորումների և կազմակերպությունների մասին՝ օրենքի 74-րդ հոդվածով, Սլովակիայի Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին օրենքի 34-րդ հոդվածով, Լատվիայի Հասարական կազմակերպությունների մասին՝ օրենքի 21-րդ հոդվածով, Ուկրաինայի Հասարական միավորումների մասին՝ օրենքի 26-րդ հոդվածով, Հունգարիայի Հասարակական կազմակերպությունների մասին՝ օրենքի 19-րդ հոդվածով, Չեխոսլովակիայի Հասարակական կազմակերպությունների մասին՝ օրենքի 20-րդ հոդվածով, Բուլղարիայի Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին՝ օրենքի 40-րդ հոդվածով և այլն:

Նկատենք նաև, որ որոշ երկրներում ՀԿ-ները պարտավոր են հրապարակել ոչ թե իրենց կողմից կազմված, այլ աուդիտ ծառայության արդյունքները: Նպատակը տվյալ դեպքում մեկն է. բացառել միջազգային հանցավորության, փողերի լվացման, ահաբեկչության երևույթների տարածման բոլոր հնարավոր օղակները, իսկ ՀԿ-ները չեն կարող այդ իմաստով բացառություն կազմել:

Ինչ վերաբերում է հաշվետվությունը ներկայացնելուն, ապա դրանք ներկայացվում են հիմնականում տվյալ երկրի արդարադատության նախարարություն: Կան նաև երկրներ, որոնք նույն հաշվետվությունը պարտավորեցնում են ներկայացնելու կառավարման այլ մարմինների, օրինակ՝ Սլովակիայում այն ներկայացվում է ներքին գործերի նախարարություն, մերձբալթյան երկրներում՝ ֆինանսների նախարարություն և այլն:

Իսկ հիմա անդրադառնանք միջազգային իրավական փաստաթղթերին:

Առարկությունների հեղինակները հղում են արել ԵՄ Նախարարների կոմիտեի 2007(14) հանձնարարականի վրա, որով իբր թե բացառվում է հիշյալ բնույթի տեղեկատվություն հրապարակելը: Ընդ որում, նշված չէ, թե տվյալ միջազգային ակտի կոնկրետ որ հոդվածով է դա բացառվում: Մենք նույնպես հղում կանենք այդ ակտի վրա՝ ընդգծելով կոնկրետ այն նորմը, հանձինս 68-րդ պարագրաֆի, որով ոչ միայն նախատեսվում է նման հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտությունը, այլև պարտավորեցնում է անդամ-պետություններին սահմանելու պատասխանատվություն՝ հաշվետվություն չներկայացնելու կամ ներկայացման կարգը խախտելու համար: Միաժամանակ, ըստ նույն պարագրաֆի, դա հիմք է ՀԿ-ներում համապատասխան ստուգումներ ձեռնարկելու համար:

Հավելենք նաև, որ հիշյալ դրույթն ընդունելու վերաբերյալ հանձնարարականներ ամրագրված են նաև այլ միջազգային իրավական ակտերով: Այսպես, վերը նշված օրենսդրական դրույթներն ընդունելու անհրաժեշտությունն արձանագրված է Փողերի լվացման դեմ պայքարը համակարգող միջազգային կառույցի՝ FATF-ի 40 հանձնարարականներում, մասնավորապես այդ փաստաթղթի 7-րդ •լիսի 1-5-րդ կետերով:

Առարկությունների հեղինակներն իրավամբ նկատում են, որ ԵՆ Նախարարների կոմիտեի վերը նշված հանձնարարականը պահանջում է, որպեսզի ՀԿ-ների համար սահմանվեն այնպիսի սանկցիաներ ու պարտավորություններ, ինչպիսիք սահմանված են մյուս իրավաբանական անձանց համար: Այնուհետև, եզրահանգում է ներկայացված, ըստ որի նախագծով ՀԿ-ների համար հավելյալ պարտավորություններ ու սանկցիաներ են առաջադրված: Նկատենք, որ նախագծով ճիշտ հակառակ մտտեցումն է ամրագրված. ՀԿ-ների կողմից տարեկան տեղեկատվություն հրապարակելը պարզապես համադրելի չէ այն հաշվետվությունների հետ, որոնք ներկայացնում են մյուս իրավաբանական անձին կամ ասենք կուսակցությունները: Այն, որ հիշյալ դրույթը ոչ միայն չի հակասում, այլև բխում է ոչ միայն Մահմանադրության 28-րդ հոդվածի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի 11-րդ հոդվածի պահանջներից, վկայում են նաև նույն Կոնվենցիայի հեղինակային մեկնաբանությունները:

Այսինքն, նախագծով ակնհայտ մեղմ իրավական ռեժիմ է սահմանված, ինչը հենց այդ առումով որոշ աղերսներ ունի միջազգային նշված ակտերի հիմնադրույթների հետ, սակայն տվյալ դեպքում հաշվի է առնվել հենց այն, որ մեր երկրում դեռևս իրատեսական չէ ՀԿ-ների համար այլ իրավաբանական անձանց հետ նույնական իրավական ռեժիմ սահմանելը:

Բացի միջազգային իրավական փաստաթղթերից, հիշյալ մտտեցումը պայմանավորված է ներպետական օրենսդրության մի շարք նախադրյալներով: Նախ, ինչպես արդեն նշեցինք, նախագծով առաջարկվող տարբերակն առաջին հերթին բխում է ՀԿ-ների շարքային անդամների շահերից, որոնք Հասարակական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, իրավունք ունեն ծանոթանալ կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները, բողոքարկել այդ որոշումները: Հարց է ծագում, հիմա որ դեպքում է խախտվում Մահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված՝ միավորումներ կազմելու իրավունքը՝ ՀԿ-ների անդամներին անհրաժեշտ տեղեկատվությունը սուկ վերջիններիս միջնորդությամբ տրամադրելով, թե այդ տեղեկատվությունը հանրամատչելի դարձնելով:

Մի քանի տրիվիալ հարցեր հնչեցնեմ. մի՞թե պարզ չէ, որ յուրաքանչյուր անդամի համար անիմաստ դժվարություններ են նախատեսված իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը հայթայթելու կտրվածքով: Ինչո՞ւ են նույն ՀԿ-ների որոշ նախագահներ խուսափում այդ տեղեկատվությունը մատչելի դարձնելուց անգամ իրենց կազմակերպության անդամների համար: Մի՞թե պարզ չէ, որ փաստաթուղթ կամ որոշման պատճեն, այն էլ՝ վճարովի հիմունքներով, ոչ միայն ակնհայտորեն խոցելի է դարձնում կազմակերպության անդամի ֆինանսական վիճակը, այլև՝ հոգեբանորեն կաշկանդված վիճակ ստեղծում. այլապես ինչպե՞ս մեկնաբանել այն իրավիճակը, երբ կազմակերպության անդամը պատրաստ է անգամ գումար վճարելու դիմաց ներկայանալ տվյալ կազմակերպության գործադիր մարմին և պահանջել որոշման պատճեն: Չեմ կարծում, թե այս ընթացակարգի նվաստացուցիչ բնույթը դժվարընկալելի է: Եվ վերջին հարցը. որքանո՞ւ է գործող կարգը համապատասխանում նշված օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված ՀԿ-ի գործունեության հրապարակայնության և անդամների հավասարության սկզբունքին: Հազիվ թե հավասարության մասին հնարավոր լինի խոսել, երբ կազմակերպության մի

անդամը վճարովի հիմունքներով է տեղեկատվություն ստանում, իսկ մյուսի համար՝ դա մատչելի է:

Այս հարցադրումները, կարծում եմ, վկայում են, որ երբ ՀԿ-ները խոսում են տեղեկատվությունը սոսկ հրապարակելու հետ կապված ֆինանսական դժվարությունների մասին, ապա ճիշտ կլինեք, եթե հաշվի առնեին, որ իրենց անդամները պարզապես ազատվում են անհամեմատ մեծ ծախսերից: Այս փաստարկները արժե նժարի վրա դնել ու նոր միայն եզրահանգումներ անել:

Միաժամանակ, Արդարադատության նախարարությունը պատրաստակամ է վերանայելու հիշյալ դրույթը՝ ինչպես հրապարակելու ընթացակարգերի, այնպես էլ՝ ծավալի կտրվածքով: Այսպես, մենք կարող ենք քննարկման նյութ դարձնել հետևյալ դիրքորոշումը. հիշյալ տեղեկատվությունը սահմանափակվում է, նախ, այն մասով, որն այս կամ այն կերպ առկա է հարկային հաշվետվություններում, ինչպես նաև այն մասով, որը կարող է անհամարժեք դժվարություններ առաջացնել դրանք կազմելու համար. սրանք լրացուցիչ քննարկման հարցեր են:

Ինչ վերաբերում է հրապարակման ընթացակարգին, ապա կարող ենք առաջարկել հետևյալ տարբերակները՝ տեղեկությունները հրապարակվում են ոչ թե որոշակի տպաքանակ ունեցող մամուլում, այլ՝ տվյալ ՀԿ-ի կայք-էջում, այդ մասին իրազեկելով լիազոր մարմինն, կամ դրանք էլեկտրոնային տարբերակով փոխանցվում են լիազոր մարմին, և վերջինս պարտավորվում է զետեղել այն համապատասխան կայք-էջում: Այսինքն՝ առաջարկվող տարբերակով ՀԿ-ների համար ընդհանրապես նկատելի ծախսեր չեն առաջադրվում:

Իմ կողմից, այսպիսով, բերվեցին հանգամանալից փաստարկներ, որոնք մի կողմից հիմնավորում են օրինագծի ընդունման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ առանձին ՀԿ-ների առարկությունների ոչ բավարար իրավաչափությունը:

Բնակաբար, մենք դեմ չենք օրինագիծը վերանայելու գաղափարին, սակայն դա կարող է արվել միայն ողջախոհության շրջանակներում և բացառապես ՀԿ-ների մեծամասնության շահերի հաշվառմամբ: Վերջում նկատեմ, որ օրինագիծը քննարկվել է ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի տնօրենի և իրենց կողմից հրավիրված փորձագետների մասնակցությամբ և որևէ տարաձայնություն չի արձանագրվել: Բացի այդ, նախագիծն ուղարկվել է Վենետիկի հանձնաժողով, սպասում ենք արդյունքներին: Մեկ ընդհանուր նկատառում. ընթանում է օրինագծի քննարկում, որի դրույթների հետ կարելի է և չհամաձայնվել և ներկայացնել առարկություններ, սակայն անհասկանալի է այն մոտեցումը, երբ օրինագծի քննարկումը վեր է ածվում քաղաքակրթության տարրական նորմերի անտեսմամբ ուղեկցվող գնահատականներով, անհարկի կասկածամտությամբ ու անհարիր մեղադրանքներով: Կարծում եմ, ինքներդ էլ համոզվեցիք, որ հնչած առարկությունների էական մասն ընդունելի է մեզ համար, առկա է դրանք համակողմանի քննարկելու և առավել ընդունելի լուծումներ գտնելու պատրաստակամություն և ի՞նչ իմաստ ունեն սուեմացուցիչ վարքագիծը նաև օրինագծերի քննարկման գործիք դարձնելը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն